



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ) ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի և Կարեն Սարգսյանի,

քննարկելով Պալատի ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունների և լրացումների մշակման (նախագծի հաստատման) և ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելու հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց՝

Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի փորձագիտական խմբի (կազմում ներգրավված էին նաև ԱՄՆ փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ) առաջարկների հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի աշխատանքային խումբը կազմել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այդ թվում՝ հավելվածի) փոփոխությունների և լրացումների նախագիծը (**այսուհետ՝ Նախագիծ**):

Պալատի աշխատակազմի կողմից Նախագիծը **09.07.2019թ.** էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել էր փաստաբաններին մինչև 23.07.2019 թվականը առաջարկություններ կամ դիտողություններ ստանալու խնդրանքով:

Պալատի աշխատակազմի կողմից Նախագիծը **26.08.2019թ.** կրկին անգամ ուղարկվել է փաստաբաններին, ինչպես նաև 29.08.2019թ. հրավիրվել է ակումբի նիստ Նախագիծը քննարկելու համար:

Նախագիծը **29.08.2019** թվականին Փաստաբանների պալատի ակումբի

27 սեպտեմբերի 2019թ.

թիվ 18/11-Լ

նիստում քննարկվել է:

Փաստաբանների ներկայացված առաջարկների և դիտողությունների հիման վրա Նախագիծը լրամշակել է:

Պալատի աշխատակազմի կողմից Նախագիծը **06.09.2019թ.** ուղարկվել էր փաստաբաններին մինչև 10.09.2019 թվականը առաջարկություններ կամ դիտողություններ ստանալու խնդրանքով:

Ստացված առաջարկների հիման վրա Նախագիծը կրկին լրամշակվել և ներկայացվել է խորհրդի քննարկմանը:

Նախագիծը ներկայացվել է Պալատի խորհրդի **13.09.2019թ. թիվ 17 նիստի**, իսկ այնուհետև **27.09.2019թ. թիվ 18 նիստի** քննարկմանը:

Պալատի խորհրդի ներկա անդամների կողմից մշակվել է Նախագիծը (Նախագծի մշակմանը մասնակցել են նաև խորհրդի անդամներ Գայանե Դեմիրջյանը և Տիգրան Խուրշուդյանը, սակայն որոշման կայացման պահին բացակայել են):

Նախագծով մասնավորապես հետևյալ փոփոխությունները և լրացումներն են առաջարկվում կատարել Փաստաբանի վարքագծի կանոնագրքում.

- Խմբագրվում է Կանոնագրքի նախաբանը.
- Կանոնագրքի 1.1 կետի (Փաստաբանի դերը հասարակության մեջ) երրորդ պարբերությունը շարադրվում է նոր խմբագրությամբ, հստակեցնելով փաստաբանի իրավական և բարոյական պարտականությունները վստահորդի նկատմամբ, դատարանների և այլ մարմինների առջև, փաստաբանի մասնագիտության հանդեպ, ինչպես նաև հասարակության նկատմամբ.
- Կանոնագրքի 1.4 կետում (Սահմանումներ) խմբագրվում են որոշ սահմանումներ, ինչպես նաև լրացվում են նոր սահմանումներ.
- Կանոնագրքի 2.1 կետը (Անկախություն) լրացվում է փաստաբանին վստահորդի հետ նույնացնելու սահմանափակման հետ կապված նոր պարբերություն.
- Կանոնագրքի 2.2 կետը (վստահություն և հարգանք իր մասնագիտության նկատմամբ), այդ թվում վերնագիրը շարադրվում է նոր խմբագրությամբ, որտեղ մասնավորապես քաղաքացու կամ հասարակության վստահության անհրաժեշտ պայմաններն են թվարկվում՝ փաստաբանի մասնագիտական անկախությունը, պարկեշտությունը, ազնվությունը և բարեխղճությունը:
- Կանոնագրքի 2.3.7 ենթակետը շարադրվում է նոր խմբագրությամբ, որտեղ սահմանվում է առանց վստահորդի համաձայնության պատվիրատուին (վստահորդ չհանդիսացող անձ, որը պայմանագիր է կնքել փաստաբանի հետ) վստահորդի գործի հետ կապված տեղեկություն տրամադրելու անթույլատրելիությունը.
- Կանոնագրքի 2.3 կետը լրացվում է նոր 2.3.8 ենթակետով, որի համաձայն փաստաբանական գաղտնիք պահպանելու տեսակետից վստահորդ է համարվում նաև փաստաբանին իրավաբանական օգնություն ցույց տալու համար դիմած անձը, անկախ նրանից, թե այդ անձը օգտվել է փաստաբանի ծառայություններից, թե՛ ոչ.
- Կանոնագրքի 2.6 կետը (վստահորդի շահերը) շարադրվում է նոր խմբագրությամբ.

- Կանոնագրքի 2.9 կետը (Պալատի հետ փոխհարաբերություն) լրացվում է նոր 2.9.5 և 2.9.6 ենթակետերով, ըստ որոնց անթույլատրելի է համարվում Պալատի մարմինների անդամներին, ինչպես նաև ընտրված անձանց և աշխատակիցներին վիրավորել և զրպարտելը: Նաև հստակեցվում է, որ այդ կանոնը չի բացառում փաստաբանի քննադատության և նշված անձանց գործողությունները բողոքարկելու իրավունքը:
- Կանոնագրքի 2.10.1, 2.10.2 և 2.10.4 ենթակետերը խմբագրվում են, կապված հրապարակային վստահորդի գործը ներկայացնելու հետ.
- Կանոնագրքի 2.11.1 ենթակետի երկրորդ նախադասությունը խմբագրվում է կապված փաստաբանական գործի (վարույթի) նյութերը գաղտնի պահվելու հետ.
- Կանոնագրքի 2.13 կետի (փաստաբանի անձնական գործ) և 3.1.11 (անվճարունակին անվճար իրավաբանական օգնության մասին իրազեկելու պարտականությունը) ենթակետի գործողությունը դադարեցվում է.
- Կանոնագրքի 3.1 կետը լրացվում է 3.1.12 ենթակետով, որով սահմանվում է փաստաբանի պարտականությունը արձակուրդ մեկնելու կամ հարգելի պատճառով նիստին մասնակցելու անհնարինության դեպքում.
- Կանոնագրքի 3.2 կետը (Հանձնարարությունն ընդունելը բացառող հանգամանքները, շահերի հակասություն) լրացվում է 3.2.11-3.2.13 ենթակետերով, որոնք կապված են փաստաբանական գրասենյակներում շահերի բախումների հետ.
- Կանոնագրքի 3.5.5 ենթակետը շարադրվում է նոր խմբագրությամբ.
- Կանոնագրքի 3.8 կետում (իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի լուծումը) կատարվում են որոշ փոփոխություններ.
- Կանոնագրքի 4.1 կետը (վարվելակերպի կանոնները դատարանում) շարադրվում է նոր խմբագրությամբ.
- Կանոնագրքի 9.1 կետը (Կարգապահական պատասխանատվությունը արարքի կրկնակիության դեպքում) շարադրվում է նոր խմբագրությամբ, մասնավորապես 4-րդ (հարաբերությունները դատավորների հետ) և 6-րդ (Այլ մարմինների հետ հարաբերություններ) գլուխներով նախատեսված կանոնների կրկնակի (երկրորդ անգամ) խախտումը չի համարվելու ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում: Նախատեսվում է նաև, որ մեկ տարվա ընթացքում չորրորդ անգամ կատարվող խախտումը չի համարվի ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, եթե խախտումները թույլ են տրվել օրինակ մեկ վարույթի (դատական գործի և այլն) շրջանակներում: Նախատեսվում է 18 ամսվա անդամավճարի պարտք ունեցող փաստաբանների արտոնագրի դադարեցման հիմք, զուգահեռաբար սահմանվելով արտոնություն առաջին անգամ, եթե պարտքը մարվում է.
- Փոփոխություններ և լրացումներ են առաջարկվել նաև Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ում:

Նախագծով նախատեսվում է հաստատել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հիշատակված (այդ թվում՝ Նախագծի մեջ նշված այլ կետերի, ենթակետերի, հոդվածների, որոնք նշված են հավելվածում) փոփոխությունները և

լրացումները, ինչպես նաև վերոհիշյալ փոփոխությունների և լրացումների հիման վրա Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը շարադրել նոր խմբագրությամբ, ինչով կհստակեցվեն Կանոնագրքի տիրույթում գտնվող որոշ հարաբերությունների կարգավորումներ:

Ելնելով վերոգրյալից և նախագծի մշակման արդյունքներից, հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 կետի 1-ին ենթակետի պահանջները, Պալատի խորհուրդը, միաձայն

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

**1. Հաստատել մշակման արդյունքում կազմված «Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին» Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշման նախագիծը՝ համաձայն հավելվածի:**

**2. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունների և լրացումների՝ սույն որոշմամբ հաստատված նախագիծը:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

27 սեպտեմբերի 2019թ.  
թիվ 18/11-Լ  
ք.Երևան